



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 26 ՅՈՒՆԻՄԻ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստագրութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստագրութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ լիս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ

Երանի՛ անոնց, որոնք ամբասիր կեանք մը կ'ապրին,
որոնք կ'ապրին Տիրոջ Օրէնքին համաձայն:
Երանի՛ անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն,
ամբողջ սրտով անոր կը հնազանդին. որոնք չարիք չեն գործեր,
այլ՝ անոր ճամբուն մէջ կը քալեն:
Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել,
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.
մի՛ ձգեր որ պատուէրներէդ խտտորիմ:
Շնորհք ըրէ ինձի՝ քու ծառայիդ, որպէսզի ապրիմ եւ խօսքերդ գործադրեմ:
Սորվեցուր ինձի, Տէր, կանոններդ պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կատարեմ զանոնք:
Քու ձեռքերովդ ստեղծեցիր եւ զիս կազմեցիր.
տուր որ հասկնամ եւ սորվիմ քու պատուէրներդ:
Փրկութեանդ կը կարօտիմ, եւ իմ յոյսս խօսքիդ վրայ դրեր եմ:
Ինչքան կը սիրեմ Օրէնքդ,
ամէն օր ան է խորհրդածութեանս առարկան:
Խօսքդ ճրագ է քայլերուս, լուսաւորող՝ ճամբաներուս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՊՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՑ Ի (20) ԳԼՈՒԽ



ՏԱՄԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:1-3)

Աստուած թելադրութիւնները փայ եպք Իսրայելի որդիներուն, թէ այս բոլորի նպատակը ուրիշ բան չէ եթէ ոչ Իրեն սեփական ժողովուրդ պատասարելու համար, քահանաներու թագաւորութիւն եւ սուրբ ազգ, մանաւանդ եթէ երբեք անոնք Աստուծոյ ձայնին հնազանդին ու Իր ուխարը պահեն: Թելադրութիւններէն յետոյ կը պատրաստուին Տէրը դիմաւորելու համար, սակայն Տէրը կը զգուշացնէ որ պէտք է մաքրուին, սրբուին ըստ այնմ Տէրը դիմաւորելու համար:

Եւ ահա պահը կը հասնի որպէսզի Աստուած Իր պատուիրանները փայ Իսրայելի որդիներուն, որպէսզի այս պատուիրաններով առաջնորդուի, դաստիարակուի ու պատրաստուի խոստացուած երկիր մուտք գործելու: Պատուիրաններ, որոնք ուրիշ բան չեն եթէ ոչ լոյս եւ ճրագ, որոնք պիտի լուսաւորեն միտքն ու հոգին, ինչպէս նաեւ ճանապարհը Իսրայելի որդիներուն:

Առաջին պատուիրան: **«Ես եմ Եհովան, քու Աստուածդ, որ քեզ Եգիպտոսի երկրէն, ծառայութեան փոխէն, հանեցի: Ինծմէ զապ ուրիշ աստուածներ չունենաս»** (2-3 հմբ):

Ամէն բանէ առաջ այս պատուիրանը ոչ միայն պարմական դէպքի մը յիշեցումն է, այլ Աստուծոյ փրկագործութիւնը, որ Իսրայելի ժողովուրդին համար անմոռանալի փորձառութիւն մը պիտի ըլլայ, որ սերունդէ սերունդ պէտք է պարմէ: Դէպք մը, որուն մէջ Աստուծոյ ինքնութիւնը կը բացայայտուի, որուն հիման վրայ երկրորդ պատուիրանը կը փրուի:

Առաջին իսկ պատուիրանով Աստուած կու գայ ցոյց փայլու, յիշեցնելու եւ զգուշացնելու, թէ Ինքն է Եհովան, այսինքն՝ «Ան որ է», այսինքն՝ յաւիտեանը: Ան որ զիրենք ազատագրեց Եգիպտոսի ստրկութենէն: Բան մը որ պէտք է յիշեն ու յիշեցնեն, թէ իրենք չունէին այդ կարողութիւնը դուրս գալու Եգիպտոսի ստրկութենէն, Աստուած էր որ զիրենք դուրս բերաւ: Ուստի իմանալով այս բոլորը, զգուշ պէտք է ըլլան, որպէսզի յանկարծ չըլլայ թէ այս անգամ մէկ այլ դժուարութեան պարագային ուրիշ աստուածներու դիմեն, ինչ որ յետագային, փակաւին շարժամանակ չանցած պիտի պատահէր, երբ Մովսէս Սինա լեռ բարձրանալով պիտի ուշանար, եւ իրենք ոսկիէ հորթ պիտի շինէին եւ անոր երկրպագութիւն ընէին: Բան մը որ Աստուծոյ զայրոյթը պիտի շարժէր: Ահա թէ ինչու Աստուած առաջին իսկ պատուիրանով կը զգուշացնէ եւ կը յիշեցնէ այս փրկագործական դէպքը:

Այս պատուիրանը նաեւ այսօր մէզմէ իւրաքանչիւրին: Այսօր ալ յաճախ կը մոռնանք, որ մենք եւս Աստուծոյ առաջնորդութեամբ, եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գոհագործումով ազատագրուեցանք մեղքի ստրկութենէն, բայց զգոյշ որ երբ դժուարութեան մէջ ըլլանք դիմենք Ամենակալ Աստուծոյն, որ մեզ ազատագրեց մեղքի ստրկութենէն: Ահա այս պատուիրանին հիման վրայ է որ Աստուած կը զգուշացնէ որ ուրիշ աստուածներ չունենան: